

## ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՑԵՆԱԽՍՈՍՈՒԹԻՒՆ

Դուռը Մէգրելի՝ «Անմեղ զոհ», վրաց. թարգմանեց Դ. Կ., Թիֆլիս,  
պինն է 8 կոպ.:

Վրացերէնից թարգմանուած երրորդ գրքոյկն է այս, որ  
մենք թերթեցինք հաճութեամբ։ Մեր զգացած հաճոյթը այս  
փոքրիկ պատմուածքի գեղարուստական աշքի ընկնող արժա-  
նիքների համար չէ։ Հեղինակն ինչպէս երևում է անփոքի  
մէկն է, որին պակասում է կարճ պատմուածքներին ուժգնութիւն  
ու թափ տուող բանաստեղծական թոփչքը։ Այս պատմուածքը  
հետաքրքիր է զուտ հասարակական տեսակչութիւն։ Նա մի փոքր  
ծանօթութիւն է տալիս մեզ մեր դարաւոր հարեւանների մասին,  
որոնց հետ ապրում ենք մի երկնքի տակ, բայց համարեա միշտ  
օտար։ Կոծիան գիւղացի մի խեղճ երիտասարդ է, որ աշխա-  
տանքի ազնուացնող առաքինութիւնն է ըմբռնել և օրուգի-  
շեր դադար չունի իր պառաւ մօր հետ։ Նա մշակում է իր  
փոքրիկ այգին, որ կարողանայ ապրուստը հայթհայթել. բայց  
ազնուական և կալուածատէր Զուրաբը աչք ունի հէնց այդ  
այգու վրայ և նա վերջիվերջոյ կարողանում է խեղճ կոծիային  
վտանգի ենթարկել, բանտ նստեցնել տալ և այգուն տիրա-  
նալ։ Այդ այնքան էլ դժուար չէր, որովհետև Զուրաբին են լսում  
գիւղական ջոջերը, իշխանները, գրագիրը, դատաւորները, նա  
դրամ ունի և ազդեցութիւն, և կոծիան կորչում է, առանց որ  
նրա աղաղակը մի մարդ լսի։ Նա խեղճ է և անզօր, նա «անմեղ  
զոհն» է։

Այս վէպիկի ընթերցանութիւնը մեզ ասում է, որ  
վրացի ժողովուրդն էլ տառապում է նոյն չարիքից, ինչ որ  
մերը։ Այստեղ էլ խեղճը, աշխատաւորը՝ շահագործուած, իրա-  
ւագուրկ է հարեւան ուժեղների ձեռքից։ Նա «անմեղ զոհ» է,  
նա իր վաստակի, իր պատուի, իր կեանքի տէրը չէ, նա անզօր  
է պայքարի մէջ, կեանքում չի տեսել արդարութիւն և իրա-  
ւունք։ Տարբերութիւնն այն է, որ մեզանում կեղեքիչը մի Սար-

գիս կամ Մարտիրոս աղա է, իսկ վրացի գիւղում մի Զուրաբ կամ ազնուական Հ...շվիլի:

«Որտեղ տանձ—այստեղ պոչ» . իւրաքանչիւր ժողովուրդ հէսց իր մէջ իր ծոցումն է կրուս սեփական կեանքը կրծող չարիքը, իր կողքին է բուն դրել հազար գլխանի հիդրան, որ խեղուում, պատառուաում է անմեղ զոհերին Զարմանալի է, թէ ինչ տրամաբանութեամբ վրացի մի կարգ հրապարակախօսներ իրանց ժողովրդի դժբախտութիւնը փնտրում են բոլորվին հեռու, իրանց երկրից դուրս, իրանց այլացեղ հարևանների մէջ,

Դուսու Մէգրելին ինչպէս երեւում է աւելի ճիշտ է ըմբռնել իր հայրենի իրականութիւնը, նրա Զուրաբը վրացի է, նոյնիսկ ազնուական: Անօգուտ է հողմաղացների վրայ տէզեր կոտրատել չարիքի դէմ կոռւելու համար, պէտք է շրջանկատ լինել և մատը վէրքի վրայ դնել:

Պատմուածքի լեզուն բաւականին սահուն է և կարդաց-  
ուում է հաճութեամբ:

#### Կ. ՀԱՐ.

Իղե Գրապահ՝ «Անիծուած վայրը», նովելլա Կովկասի կեանքից. գերմ.  
թարգմ. Ա. Ցէր-Պոլսիան, Ս.-Պետերբուրգ, 1903:

Իլզէ Ֆրապահ՝ այս տաղանդաւոր և համակրելի գերմա-  
ուուին արդէն մի շատ ծանօթ անուն է ոչ միայն իր հայրենի-  
ուում, այլև հարևան երկիրներում \*): Նրա վէպերը, որոնց մէջ  
նորհալի հեղինակը կարողանում է դնել կանացի այնքաննուրբ  
գացմունք և դիտողութիւն՝ միացած օրիգինալ և լուսաւոր  
դէաների հետ, միշտ կարդացւում են յափշտակութեամբ: «Անի-  
ուած վայրը» պատմուածքը նրա վէպերի ամբողջ սերիալի  
էջ առանձին տեղ է բռնում, որովհետեւ նիւթը վերցրուած է մի-  
նզամայն անծանօթ միջավայրից՝ յատկապէս հայ կեանքից:  
Եղ նիւթը չափազանց պարզ է. «Անիծուած վայրը»—Բագու է  
նում ազայիշէնցի մի հայ երիտասարդ Տիգրան անունով,  
ո «փող աշխատի ուղարկի տուն. փողը հաւաքուի և յետոյ նա  
առնայ նարգիսի հետ նշանադրութեան հանդէսը կատարի»:  
Միտասարդը սակայն իր նպատակին չի հասնում. նա  
ո՞ւ է գնում «անիծուած վայրում» գործող մեքենաներին, մա-

\*.) Դեռ անցեալ տարի նրա մի վէպը՝ Ցիւրիխի ուսանողունիների կեանքից,  
ու աղմուկ հանեց ամբողջ Շվեյցարիայում: